

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարության հետ

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ

Վ. Գաբրիելյան

Գ. Խաչատրյան

27 ապրիլի 2011 թ.

16 մարտի 2011 թ.
N 12

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ

**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱԼՑՄԱՆ (ԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ)
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ՉԱՓԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 59.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է՝ ամսվա ընթացքում իրացված գազի ծավալի նկատմամբ մեկ մետր խորանարդ գազի հաշվով 20 դրամ հաշվարկային դրույքաչափ կիրառելով: Հաշվարկային դրույքաչափով հաստատագրված վճարի հաշվարկման համար ամսվա ընթացքում իրացված գազի ծավալը չի կարող պակաս լինել ամսվա ընթացքում ստացված գազի ծավալի 87.5 տոկոսից:

Օրենքի 59.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության հաստատագրված վճարի նվազագույն ամսական չափը յուրաքանչյուր գազալցման կայանի համար չի կարող պակաս լինել՝

Երևան քաղաքում գտնվող գազալցման կայանի համար՝ 1500000 դրամից,

Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի մարզերում գտնվող գազալցման կայանների համար՝ 1125000 դրամից,

այլ վայրերում գտնվող գազալցման կայանների համար՝ 900000 դրամից:

Օրենքի 98-րդ հոդվածի համաձայն Օրենքի 7 հոդվածի «գ», «դ», «ե», «ը» «ժգ», «ժդ», «ժե», «ժզ», «ժը», «ի» և «իա» ենթակետերով նախատեսված գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկը կասեցվում է վճարողի կողմից հարկային տեսչության մարմնին գործունեության դադարեցման (կասեցման) մասին դիմում-հայտարարություն ներկայացնելու դեպքում՝ հայտարարության մեջ նշված օրվանից, որը չի կարող հայտարարության ներկայացման հաջորդ օրվանից ավելի շուտ լինել:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները»:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով *պաշտոնապես պարզաբանում եմ*.

Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեությունն ամսվա ընթացքում դադարեցնելու դեպքում տվյալ ամսվա (գործունեության դադարեցման օրն ընդգրկող ամսվա) համար Օրենքի 59.10-րդ հոդվածով սահմանված՝ հաստատագրված վճարի ամսական նվազագույն չափի նկատմամբ Օրենքի 98-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն: Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության դադարեցման օրը տվյալ ամսվա 1-ը համարվելու և հետագայում տվյալ ամսվա ընթացքում այդ գործունեությունը չվերսկսելու դեպքում տվյալ ամսվա համար Օրենքի 59.10-րդ հոդվածով սահմանված՝ հաստատագրված վճարի ամսական նվազագույն չափը չի կիրառվում: